ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/1

6 դեկտեմբերի 2016թ.

Քննարկվեց Էդգար Բալյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 18.10.2016թ. թիվ 332497/03 որոշման դեմ:

Էդգար Բալյանի գանգատում բերված փաստարկները.

25.08.2016թ. ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության 3-րդ բաժնի ծանուցմամբ Էդգար Բալյանին (այսուհետ նաև՝ գանգատաբեր) առաջարկվել է ներկայանալ վերը նշված բաժին 2016թ. 2-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար: Ի պատասխան ներկայացված ծանուցագրի, գանգատաբերը փոստային ծառայության միջոցով ուղարկել է գրություն, որով ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության 3-րդ բաժնի պետին հայտնվել է, որ Ա/Ձ Էդգար Բալյանը հաշվառվել է ԱՆ պետական ռեգիստրում 13.05.2016թ-ին, իսկ 05.08.2016թ-ին դուրս է եկել հաշվառումից: Միաժամանակ տեղեկացվել է, որ նշված ժամանակահատվածում Էդգար Բալյան Ա/Ձ-ն որևէ գործունեություն չի իրականացրել և խնդրել է վարույթն իրականացնել հիմք ընդունելով վերոգրյալը:

18.10.2016թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության թիվ 332497/03 որոշմամբ գանգատաբերի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ 20.000 դրամի չափով: Տույժը նշանակելու համար կայացված վարչական վարույթն իրականացվել է ոչ օբյեկտիվ, խախտումներով հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի, 21 հոդվածի 1-ին մասի, 22 հոդվածի 1-ին մասի և ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթները համադրելով վերը նշված փաստական հանգամանքների հետ գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության 3-րդ բաժնի պետը հաշվի չի առել գանգատաբերի կողմից ներկայացված պատասխան գրությունը, որով հայտնվել է, որ տվյալ Ա/Ձ-ն ընդհանրապես գործունեություն չի իրականացրել, հետևաբար որևէ կերպ հարկեր չեն առաջացել և այն արդեն իսկ լուծարված է եղել վարչական վարույթը հարուցելու պահին: Այնուհետև, վարչական մարմինը տույժը նշանակելիս ընտրել է առավել խիստ տեսակը, այսինքն՝ իրացնելով իր հայեցողական իրավունքը և հնարավորություն ունենալով ընտրել 10.000 դրամից մինչև 20.000 դրամ միջակայքում ընկած որևէ տուգանքի գումար, վերջինս նախընտրել է առավելագույնը՝ հաշվի չառնելով իրավախախտման վտանգավորության աստիճանը և դրա հետևանք, ինչը վստահորեն կարելի է նշել, որ բացակայում է, իսկ օրենսդիրը պարտավորեցնում է վարչական մարմնին իր հայեցողական լիազորությունները իրականացնելիս առաջնորդվել մարդու և քաղաքացու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, ինչը այս պարագայում բոլորովին հակառակն է կատարվել: Դեռ ավելին, իր հայեցողական լիազորություններն իրականացնելիս օրենսդիրը վարչական մարմնին

հնարավորություն է տվել նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտումների դեպքում խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ, ինչը սույն գործի շրջանակներում կլիներ ամենաօբյեկտիվ պատասխանատվությունը՝ հաշվի առնելով իրավախախտման էությունը, դրա վտանգավորությունը և դրա հետևանքը: Տրամաբանական շարունակությամբ տույժը, վերը վկայակոչած իրավական նորմի համաձայն, պետք է ծառայի իր նպատակին, այսինքն՝ նորմի վերլուծությունից հետևում է, որ դրա համակարգային նպատակներից մեկը հետագա խախտումները կանխելն է, ինչը Ա/Ձ-ի լուծարման հետևանքով այլևս նպատակային չէ: Սա ևս հաշվի չի առնվել տույժ նշանակելիս:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1 կետի ա/ ենթակետով գանգատաբերը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից կայացրած թիվ 332497/03 որոշումը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ 18.10.2016թ. թիվ 2754 արձանագրությունը պարզել է, որ Ա/Ձ Էդգար Բալյանը 05.08.2016թ. հաշվառումից հանվել է և 2016թ. տարեկան եկամուտների մասին հաշվարկը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել հարկային տեսչություն:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 18.10.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 332497/03 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով Էդգար Բալյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մինչև հարկային տարին ավարտվելը հարկ վճարողի կողմից գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելու դեպքում ֆիզիկական անձը պարտավոր է տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնել գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելուց հետո 1-ամսյա ժամկետում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Էդգար Բալյանը գործունեությունը դադարեցրել է 05.08.2016թ.-ին, հետևապես Էդգար Բալյանը պարտավոր էր գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելուց հետո 1-ամսյա ժամկետում ներկայացնել տարեկան եկամուտների մասին հաշվարկը, ինչը, սակայն, չի ներկայացրել: Արդյունքում Էդգար Բալյանի նկատմամբ կիրառվել է Վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ինչ վերաբերվում է վերոգրյալ խախտման համար Էդգար Բալյանի նկատմամբ կիրառված տուգանքի չափին, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 242.2-րդ հոդվածի համաձայն հարկային մարմինները քննում են սույն օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերն իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

Հարկային մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության վերադաս հարկային մարմնի վարչությունների պետերը և հարկային մարմնի հարկային (տարածքային) տեսչության պետերը:

Այսպիսով օրենսդիրը իրավակիրառողին իրավասություն է վերապահել համապատասխան որոշում կայացնելիս գնահատել գործի փաստական հանգամանքները և ինքնուրույն որոշել տուգանքի չափը՝ ելնելով կատարված զանցանքի ծանրության աստիճանից:

Այսպիսով, տուգանքի չափը որոշելու իրավունքը վերապահված է բացառապես իրավակիրառողին, որը տվյալ դեպքում, օգտվելով իրեն վերապահված իրավունքից կայացրել է համապատասխան որոշում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 18.10.2016թ. թիվ 332497/03 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**